ՋԻՎԱՆԻ
(Կենսագրական ակնարկ)

ԹՈՎՄԱՍ ՊՈՂՈՍՅԱՆ

Հայ աշուղական երգարվեստի ազգային դպրոցի տաղանդավոր ներկայացուցիչ, մեծանուն Ջիվանին՝ Սերովբե Ստեփանի Բենկոյանը (Լևոնյանը), ծնվել է 1846 թ. Ջավախքի Կարծախ գյուղում, ռուս-թուրքական պատերազմի հետևանքով Բասենից գաղթած Բենկոյենց Գասպարի նահապետական ընտանիքում: Ապագա մեծ աշուղը գրաճանաչություն է սովորում գյուղական վարժապետի մոտ, սովորում է գրել-կարդալ: Ուսման, երգի ու երաժշտության հանդեպ սերը նրա մեջ արթնանում է շատ վաղ: Նա հետաքրքրությամբ, ուշադրությամբ է լսում Կարծախ այցելած շրջիկ աշուղների երգն ու զրույցը: Նրա հոգում հետզհետե ամրապնդվում է աշուղ դառնալու ցանկությունն ու երազանքը, և ինքն էլ սկսում է երգեր հորինել: Համագյուղացի աշուղ Միային, որին սև լինելու պատճառով կոչում էին Ղարա-Ղազար, նկատում է պատանու հակումներն ու սերը, համաձայնվում է վերցնել իրեն աշակերտ:

Ջիվանին Միայուն աշակերտում է հինգ տարի: Սովորում է ու հմտանում աշուղական երգարվեստի մեջ: Նրա բնատուր շնորհքն ու գեղեցիկ ձայնը նպաստում են, որ նա շուտով սովորում է սազ նվագել, տիրապետել աշուղական արվեստի նրբություններին ու յուրահատկություններին, հորինել, երբեմն էլ գերազանցել նաև իր վարպետին: Ընդունված կարգի համաձայն՝ աշուղ Միային նրան հինգ տարի անց շնորհում է աշուղի կոչում և աշուղի անուն՝ Ջիվանի[1]:

Աշխատանքի բերումով 1864 թ. Ջիվանին հորեղբոր հետ գնում է Թիֆլիս, ապա Ալեքսանդրապոլ: Թիֆլիսը գեղջուկ պատանուն գերում է իր արտաքին փայլով ու շքեղությամբ, Ալեքսանդրապոլը հետաքրքրում ու գրավում է իբրև աշուղների կենտրոն: Այստեղ ապրող ու ստեղծագործող աշուղների մասին նա լսել էր Կարծախ այցելած աշուղներից: Եվ ահա Թիֆլիսից դարձյալ աշխատանքի բերումով Ալեքսանդրապոլ հասած Ջիվանին հայտնվում է Տալոյանների սրճարանում և, հաղթահարելով շփոթությունն ու հուզմունքը, ընդառաջելով ներկաներին, երգում է իր հորինած երգերը և գովասանքի արժանանում սրճարանում ներկա գտնվող աշուղների կողմից:

---

[1] *Ըստ Գ. Լևոնյանի՝ ապագա աշուղին Ջիվանիկ է կոչել հայրը (տե՛ս Ա. Մահակյան. Հայրենաշունչ քնար, Երևան, 1965, էջ 13): Ջիվանին հետագայում իր ստեղծագործություններում հանդես է եկել նաև Սրապ (Սերովբե), Վարոս անուններով՝ ընդգծելով անվան հայկականացումը: Մինչդեռ աշուղները, ըստ կարգի, անուն էին ընտրում կամ շնորհվում էր մասնագիտության, զբաղմունքի, բնավորության, ծագման բնույթից ելնելով, սակայն պարսկերեն, թուրքերեն լեզուներով. օրինակ՝ Զարգյար (ոսկերիչ), Շիրին (քաղցր), Քեշիշ օղլի (տերտերի տղա) և այլն:*

Թիֆլիսն ու Ալեքսանդրապոլն անհետևանք չեն անցնում. Ջիվանին ավելի է ոգևորվում, նրա բնատուր ստեղծագործական ձիրքն ավելի կազմակերպված դրսևորում է ստանում: Հենց այս տարիներին Ջիվանին ծանոթանում է Կարծախ այցելած նորբայազետցի աշուղ Սազայու հետ, որի համատեղ աշխատելու առաջարկը նա ընդունում է[2]: Եվ երկու երիտասարդ աշուղները սկսում են միասին հանդես գալ: Նախ և առաջ նրանք հանգրվանում են Թիֆլիսում, ելույթներ ունենում վանեցի Կարապետ Սոնանյանցի սրճարանում: Կարճ ժամանակամիջոցում նրանք անուն ու հռչակ են ձեռք բերում:

Թիֆլիսում Ջիվանին մնում է մեկ տարի: Արդեն անուն հանած աշուղ Ջիվանուն Տալոյան եղբայրները հրավիրում են Ալեքսանդրապոլի իրենց սրճարանում երգելու: 1868 թ. Ջիվանին, հավանաբար, Սազայու հետ տեղափոխվում է ու հաստատվում Ալեքսանդրապոլում: 1871 թ. նա արդեն սեփական խումբ ուներ և մշտապես ելույթներ էր ունենում Տալոյան եղբայրների սրճարանում[3]:

1872 թ. Ջիվանին ամուսնանում է սրճարանատիրոջ՝ Հովհաննես Տալոյանի դստեր՝ Աշխենի հետ: Նրանք ունենում են վեց զավակ, այդ թվում՝ հրատարակիչ-խմբագիր, աշուղագետ, մատենագետ, արվեստի վաստակավոր գործիչ Գարեգին Լևոնյանը (1872–1947) և քաղաքական, հասարակական, ազգային գործիչ Պարույր Լևոնյանը (1884–1933):

Այդուհետև Շիրակի կենտրոն Ալեքսանդրապոլը դառնում է աշուղ Ջիվանու երկրորդ հայրենիքը, այն նպաստում է նրա ստեղծագործական կարողությունների զարգացմանն ու ծաղկմանը, աշուղական երգարվեստի վերաբերյալ նրա ծրագրերի իրագործմանը: Այստեղից է սկսվում նրա երգի հաղթական երթը Անդրկովկասի, Հյուսիսային Կովկասի, Ռուսաստանի, Արևմտյան Հայաստանի հայաշատ բնակավայրերը:

Ալեքսանդրապոլը Անդրկովկասի հայաշատ, հայաշունչ ու հայախոս քաղաքներից էր: Երբ Ջիվանին հաստատվեց այնտեղ, քաղաքում գործում էին դպրոցներ, որտեղ ուսուցչություն էին անում արդեն համբավ ու հեղինակություն ձեռք բերած գրողներ ու հասարակական գործիչներ Ղազարոս Աղայանը, Հայրապետ Ղուկասյանը, Գաբրիել Տեր-Հիվհաննիսյանը (Քաջբերունի), Սարգիս Բեկնազարյանը և այլք[4]: Ալեքսանդրապոլում ներկայացումներ էին տրվում[5], իսկ սրճարաններում տեղի էին ունենում Շիրակի աշուղների ելույթներ ու մրցումներ: Քաղաքում ու Շիրակի գյուղերում ապրում ու ստեղծագործում էր շնորհալի աշուղների մի բույլ[6]: Քաղաքում գործում էր երեք սրճարան՝ Տալոյենց, Կուզիկենց, Հայկազունիենց: Հայերեն լեզվով երգերը, մասնավորապես աշուղականը, կենցաղում թուրքերենի հետ սովորական էին[7]:

---

[2] *Նույն տեղում, էջ 22–24:*

[3] *Նույն տեղում, էջ 26:*

[4] *Աշուղ Ջիվանի. Երգերի ժողովածու, Երևան, 1936, էջ 19:*

[5] *Կ. Մատինյանց. Բանաստեղծք և հյուսվածք Ջիվանի.– «Արարատ» (Էջմիածին), 1871, թիվ Է, էջ 415:*

[6] *Կ. Դուրգարյան. Շիրակի հայ աշուղները, Երևան, 1986, էջ 4–8:*

[7] *Նույն տեղում:*

Թիֆլիսում կարճատև գործունեության ընթացքում Ջիվանին հետաքրքրությամբ հետևում էր հասարակական կյանքում հայ ժողովրդի ճակատագրին առնչվող իրադարձություններին, փորձում էր կարդալով գիտելիքներ ձեռք բերել, հարստացնել, ինչո՞ւ չէ, նաև իր բառապաշարը: Տեղափոխվելով Ալեքսանդրապոլ՝ նա իր բնական ընդունակությունների ու աշխատասիրության շնորհիվ կարճ ժամանակամիջոցում դարձավ ժամանակի կրթված ու զարգացած մարդկանցից մեկը: Թիֆլիսից բերել է տալիս նոր լույս տեսած գրքեր, թերթեր: Ալեքսանդրապոլում նոտագրության դասեր է առնում Հովհաննես անունով երաժիշտից, որին երգ է նվիրել.

Պատվելի ուսուցիչ, ձայնագրագետ,
Խնդրում եմ աշխատես սրտով մեզ վրա,
Թե կուզես անունդ մնա քո հավետ,
Ցույց տու քու պտուղդ մեզի անխնա[8]:

Ջիվանու ինքնակրթությանը զգալի չափով նպաստում էին նրա լայն կապերը, ծանոթությունները ժամանակի մտավորականության ներկայացուցիչների հետ ինչպես Թիֆլիսում, այնպես էլ՝ Ալեքսանդրապոլում: «Որպես բնական խելքի, լայն մտահորիզոնի, խոր տրամաբանության և նուրբ ընկալումների տեր երգիչ-բանաստեղծ, նա քաջածանոթ է եղել մեր ժողովրդի ավանդական և գրավոր պատմությանը, գրականությանը, մեր անցյալի կուլտուրային, լավ է իմացել հայկական ու հունական դիցաբանությունը, տեղյակ է եղել հունա-հռոմեական դասական գրականության անմահ հուշարձաններին, տիրապետել է աշուղական չափածո խոսքի կառուցման ձևերին ու կանոններին, ազատորեն օգտվել է մեր հին՝ գրաբար լեզվի և նոր-նոր արմատավորվող արևելահայ զինարանից և այդ բոլորը հմտորեն օգատործել իր ստեղծագործությունների մեջ: Ջիվանին քաջածանոթ է եղել և ստեղծագործել է աշուղական տաղաչափության արվեստի բոլոր օրենքներով ու չափերով»[9]: Նրա երգը արձագանքել է ժամանակի հայ հասարակությանը հուզող շատ խնդիրների:

Ինչպես վերը նշվեց, 1871 թ. Ջիվանին հանդես է գալիս ինքնուրույն խմբով: Իր ստեղծագործական կարողություններով, իր երգերի բազմաթեմայնությամբ ու մայրենի լեզվի կիրառությամբ արհեստակից աշուղների միջավայրում մեծ հեղինակություն է ձեռք բերում: Եվ ահա շատ շուտով նրան ընտրում են իր իսկ ստեղծած արհեստակից աշուղների ընկերության (համքարության) կազմակերպության նախագահ՝ վարպետաց վարպետ (ուստաբաշի): Պահպանվել են Ջիվանու արհեստավորաց գլուխ (ուստաբաշի) ընտրության վավերագիր արձանագրությունները: Ահա դրանցից մեկը.

«ՀԱՄԱԽՈՍԱԿԱՆ ՎՃԻՌ

1892 ամի 24-րդ օրն փետրվարի, մենք ներքո ստորագրյալներս ասիական

[8] *Ջիվանու քնարը, Երևան, 1959, էջ 687:*
[9] *Նույն տեղում, էջ 28–29:*

երգիչներս Ալեքսանդրապոլ քաղաքի հավաքվածներս, այսօր ժողովում, մեր արհեստականության մեջ կարգապահություն վերականգնեցելու համար ընտրեցինք մեր միջից արհեստավորների գլխավոր (ուստաբաշի) մեր համաքաղաքացի Սերովբե Ստեփանյան (Լևոնյանին) Ջիվանի և նրա օգնականներ Համբարձում Ադամյանին և Անտոն Անտոնյանցին և մենք պարտավորվում ենք օրենքի բոլոր կանոնների համաձայն հնազանդ գտնվել:

Առ որ ստորագրենք ի. ք. Ալեքսանդրապոլ»[10]:

Հետևում են 25 ստորագրություն, որոնց մեջ ծանոթ աշուղներ՝ Մկրտիչ Տալյան (Ջամալի), Վարշամ Տրդատյան (Պայծառ), Գրիգոր Տալյան (Շերամ) և Ֆիզահի: Ի դեպ, պահպանվել է արձանագրության նաև ռուսերեն օրինակը:

Նկատենք, որ Ջիվանին «ուստաբաշի» է ընտրվել է նաև ավելի վաղ. այսպես, մի այլ վավերագիր՝ կազմված 1884 թ. ապրիլի 18-ին, Ջիվանին ստորագրում է՝ «ուստաբաշի Ջիվանի»[11]:

XIX դ. հատկապես երկրորդ կեսին, երբ Ջիվանին հաստատվեց Ալեքսանդրապոլում, բավականին աշխուժացել էր այլադավանության քարոզը: Քիչ չէին կաթոլիկություն ընդունողները, կաթոլիկ եկեղեցու հովանուն դիմողները: Քաղաքի հայ առաքելական դասի ներկայացուցիչները պայքարում էին ազգադավ երևույթի դեմ: Ջիվանին, բնականաբար, չէր կարող անտարբեր մնալ ազգը պառակտող այդ երևույթի հանդեպ: Նրա վերաբերմունքը բացահայտ արտահայտություն է գտել անտիպ, անհայտ և տպագիր մի շարք երգերում: Սակայն մեծ աշուղը մոլեռանդ չի եղել և անկախ դավանանքից գնահատել է ազգային միասնության, ազգային ինքնության գիտակցությունը: Աշուղն ըստ արժանվույն բարձր է գնահատել Ղ. Ալիշանի հայրենանվեր գործունեությունը: «Ծեսով կաթոլիկ է, բայց հոգով հայ է»[12],– բնութագրում է նրան Ջիվանին: Իր ծանոթ Ալեքսանդր Արարատյանի՝ կաթոլիկ, բայց քաղաքում հեղինակություն վայելող («Անի քաղաք նստեր կուլա» երգի հեղինակ[13]) մահվան կապակցությամբ գրել է դամբանական[14]:

Այսօր էլ իր նշանակությունը, արդիականությունը չի կորցրել Ջիվանու «Սեր» երգը (1886 թ.).

Ազգավ հայ-կաթոլիկ, բողոքականին
Լուսավորչյաններու ատելն իգուր է.

---

[10] *Գ. Լ ևոնյան. Աշուղները և նրանց արվեստը, Երևան, 1944, էջ 21–22:*

[11] *Բանագետ Հ. Գալստյանի անձնական արխիվ:*

[12] *Ջիվանու քնարը, էջ 173:*

[13] *Գ. Լ ևոնյան. նշվ. աշխ., էջ 84:*

[14] *Ջիվանու կենսագրությունից հայտնի է հետևյալ փաստը, որը վկայում է նրա լայնախոհության մասին: Նա վերցնում է աշուղ Իգիթի պապի՝ «ֆառմասոն» աշուղ Մայիլի երգերի տետրը և չի վերադարձնում: Ջիվանու որդին, որ տեղյակ էր փաստին, բացատրում է, որ Ջիվանին այն պահում է իր մոտ՝ Մայիլի երգերը տարածելու նպատակով, քանի որ հայ հասարակությունը չէր ընդունում այլադավան աշուղին: Եվ, հիրավի, Ջիվանու միջոցով Ա. Բրուտյանը նույնիսկ ձայնագրել է Մայիլին (Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1336, ց. 7, գ. 614, թ. 36, Ա. Բ ր ո ւ տ յ ա ն. Ռամկական մրմունջներ, հ. II, Երևան, 2002, էջ 9, 45, 113):*

Հարազատ որդիք են Մայր-Հայաստանին,
Սրտերը պաղեցնել-զատելն իզուր է[15]*:*

Ջիվանին հայ ժողովրդի ազատագրական պայքարին մասնակից է եղել ոչ միայն իր քնարով: Վավերագրերը վկայում են, որ նա բարեկամական, ընկերական կապեր է ունեցել Ալեքսանդրապոլում կազմակերպված «Բարենպատակ» հայրենասիրական ընկերության անդամների հետ[16]*:*

Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի մի արժեքավոր աշխատության մեջ ավելի որոշակի տվյալներ է հաղորդվում Ջիվանու հայրենանպաստ գործունեության վերաբերյալ: 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո Հայաստանում ծայր առած կամավորական շարժման ոլորտում ընդգրկված էր նաև հայաշունչ ու հայաշատ, ռուս-թուրքական սահմանամերձ Ալեքսանդրապոլը: Քաղաքում ընտրվում է հինգ հոգուց բաղկացած մի հանձնաժողով՝ կամավորական խմբերը կազմակերպելու ու նրանց գործունեությունն ուղորդելու նպատակով: Այդ հանձնաժողովի անդամ է ընտրվում Ջիվանին[17]*:*

Ջիվանին բոլոր աշուղների նման ունեցել է աշակերտներ «…(մեծ մասամբ կույր) այժմ հայտնի են այն կողմերում որպես լավ ածողներ, ինչպես Համբարձումը (Համբոն), Երվանդը, Անտոնը, Խաչատուրը, Գարեգինը և այլք»[18]*:*

Ալեքսանդրապոլում Ջիվանին իր շուրջն է համախմբել երիտասարդ աշուղների մի փունջ, ովքեր թեև ստեղծագործում էին աշուղական ավանդական կանոններով, բայց նրա ազդեցությամբ, օրինակով ու հորդորով դառնում են նրա հետևորդները, նրա հիմնադրած ազգային դպրոցի հավատարիմ աշուղները: Նրանք են՝ Սազային, Ջամալին, Խայաթը, Պայծառեն, Աշխույժ (ապարանցին), Մահուբի Գևորգը, Նոր Սոխակը, Հավասին[19]*, հաջորդ սերնդից՝ ամենաշնորհալիները. Շերամը (Գրիգոր Տալյանը), Աշոտը (Դադայան), Շահենը, Հայրիկը և այլք:*

Ջիվանու երգերը տպագրվել են նրա ստեղծագործական կյանքի արշալույսից առ այսօր պարբերական մամուլի էջերում, առանձին ժողովածուներում՝ հաճախ առանց նրա գիտության: Նրան ճանաչում է բերում «Արարատ» ամսագրում լույս տեսած երգերի փունջը[20]*: Ջիվանու երգերի առաջին ժողովածուն հրատարակվել է Ալեքսանդրապոլում*[21]*, որը լույս տեսնելուց հետո շատ շուտ սպառվում է: Հաջորդ ժողովածուն նույնպես տպագրվում է Ալեքսանդրապոլում*[22]*: Այստեղ է հրատարակվում*

---

[15] *Ջիվանու քնարը, էջ 173:*

[16] *Վ. Ա. Պ ա ր ս ա մ յ ա ն. Հայ ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1959, էջ 132:*

[17] *Մ. Ն ե ր ս ի ս յ ա ն. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, Երևան, 2002, էջ 150:*

[18] *Գ. Լ ևոնյան. Երկեր, Երևան, 1963, էջ 101:*

[19] *Մ. Ա ղ ա յ ա ն. Հայ գուսանները և գուսանա-աշուղական արվեստը, Երևան, 1959, էջ 14:*

[20] *«Արարատ», 1871, թիվ Ը, էջ 473–474:*

[21] *Աշրղ Ջիվանու երգերը, Ալեքսանդրապոլ, 1882:*

[22] *Աշրղ Ջիվանու երգերը, Ալեքսանդրապոլ, 1886:*

նաև երրորդ ժողովածուն[23]: Հետագայում էլ են հրատարակվել մի քանի ժողովածու: Այնուհետև սկսվում է նրա երգերի հաղթարշավը հայկական միջավայր՝ Անդրկովկաս ու Հյուսիսային Կովկաս, Արևմտյան Հայաստան ու այլուր: Մեզ հայտնի նրա երգերի վերջին ժողովածուն լույս է տեսել Երևանում 1988 թ.[24]: Ջիվանու երգերը թարգմանվել են ռուսերեն, ֆրանսերեն և այլ լեզուներով:

1895 թ. Ջիվանին ընտանիքով տեղափոխվում է ու հաստատվում Թիֆլիսում, ուր և ապրում է մինչև կյանքի վերջը՝ 1909 թ.: Հաստատվելով Թիֆլիսում՝ նա նպատակ ուներ նյութապես ապահովել ընտանիքը և կարևորը՝ զավակներին լավ կրթություն տալ: Որդիների կրթության, նրանց ապագայի վերաբերյալ մտահոգությունը մշտապես զբաղեցրել է մեծ աշուղին, մի հանգամանք, որն արտահայտվել է նաև նրա մի շարք երգերում:

Թիֆլիսում, սակայն, Ջիվանին չի կարողանում քիչ թե շատ ապահով կյանք վարել: Կարիքը, չքավորությունը նրան մշտապես հետապնդում են: Նրա երազանքն է եղել ունենալ շնորհք, միտք ու խելք, որ՝ «կրթեմ զավակներս՝ չմտած դագաղ».

Պատրաստեմ զավակներ ազնիվ ու արդար,
Օգտավետ անդամներ մարդկության համար,
Տե՛ր, տուր ինձի նոր կյանք, տուր ինձի հանճար,
Գուցե արագանան քայլերս դանդաղ[25]:

Կա մի հանգամանք, որ բխում էր նրա վերաբերմունքից կրթության, ուսման հանդեպ: Իր անուսում լինելը նա պատճառաբանում էր ընտանեկան միջավայրով: Երգերից մեկում Ջիվանին հետևյալն է ասում.

Ջիվանս, հասկացա բանի հիմը նոր,
Ավա՜ղ, ժամանակս անցկացավ բոլոր,
Ուսում չգիտենալուս ես չեմ հանցավոր,
Հայրս է պարտական, ես պարտական չեմ[26]:

Մեծանուն աշուղի բազմանդամ ընտանիքի նյութական վիճակը այդպես էլ չի բարելավվում, դրա հետ օրեցօր վատանում էր նրա առողջությունը, ավելի թուլանում առանց այն էլ վատ տեսողությունը.

Դուք հերիք մեկ կյանքս կերաք,
Դառն, տխուր հանգամանքներ,
Միրտ ծակոտող՝ որպես սլաք,
Երկսայրի սուր, հանգամանքներ...[27]

---

[23] *Աշըգ Ջիվանու երգերը, Ալեքսանդրապոլ, 1893:*
[24] *Ջիվանի, Երևան, 1988:*
[25] *Աշուղ Ջիվանի. Անհայտ երգեր, Երևան, 2009, էջ 550:*
[26] *Ջիվանու քնարը, էջ 298:*
[27] *Աշուղ Ջիվանի. Անհայտ երգեր, էջ 205:*

1896–1900 թթ. (ստույգ ժամանակը հայտնի չէ) Ջիվանին տեսողությունը վերականգնելու նպատակով մեկնում է Բուլղարիա՝ Պլովդիվ քաղաք: Բարեկամների խորհրդով նա գնում է Վիեննա, դիմում մասնագետների, բայց վերադառնում է անարդյունք[28]:

Իր քառասունամյա ստեղծագործական կյանքում աշուղ Ջիվանին բազմաթիվ շրջագայություններ է ունեցել, հանդես եկել իր խմբով: Նա հաճախ իր երգերի հորինման ու տեղի վերաբերյալ նշումներ է արել: Ելնելով պահպանված տվյալներից՝ նա ելույթ է ունեցել Երևանում, Շուշիում, Գանձակում, Բաքվում, Կարսում, Էրզրումում, Սալմաստում, Դերբենտում, Բաթումում, Փոթիում, Սուխումում, Նովորոսիյսկում, Ղրիմի քաղաքներում, Խարկովում, Ռոստովում, Եկատերինոդարում, Արմավիրում և այլն:

Ինքնակենսագրական տարաբնույթ տեղեկություններով հարուստ է աշուղի «Ճանապարհորդական տպավորություններ» խորագրով ստեղծագործությունը, որը գրել է 1900–1902 թթ. ընթացքում: Ջիվանին պահել է օրագիր, որում օր առ օր գրանցել է տեղի ունեցած արժանահիշատակ դեպքերը, ներկայացրել այն բնակավայրերը, որտեղ երգել է տեղի ժողովրդի, այդ թվում՝ հայերի վիճակը, կենցաղը, սովորությունները և այլն: Այսպես, մի գրառումից տեղեկանում ենք, որ աշուղի երեք հոգուց բաղկացած խումբը դուրս է գալիս Թիֆլիսից 1900 թ. օգոստոսի 1-ին: Խումբը ելույթներ է ունենում Բաթում, Փոթի, Սուխում, Նովորոսիյսկ, Կերչ, Թեոդոսիա, Յալթա, Սիմֆերոպոլ, Սևաստոպոլ, Խարկով, Մելիտոպոլ, Ռոստով, Նոր Նախիջևան քաղաքներում: Նրանց ելույթներն անցել են մեծ հաջողությամբ, խոչընդոտներ հարուցվել են միայն իշխանությունների կողմից.

Քյուֆերյանցը աշխատեցավ քաջաբար,
Մեր երգելու մասին խնդրեց, չեղավ ճար,
Եկեղեցուն մոտիկ լինելուն համար
Ոստիկանապետից մերժում ստացավ[29]:

Ճանապարհորդության ընթացքում Ջիվանին յուրաքանչյուր քաղաքում հանդիպել է հայերի, հատկապես մշեցի գաղթականների, իր ցավն ու կարեկցանքն արտահայտել նրանց վիճակի, անտուն-անընտանիք կյանքի կապակցությամբ: Բոլոր քաղաքներում դիտարկել է ու արժևորել հայ եկեղեցու, հայ քահանայի, հայկական դպրոցի, ուսուցչի առկայության փաստը, գնահատել դրանց ազգապահպան նշանակությունը օտար ափերում[30]: Հավելենք, որ շրջագայությունների ընթացքում հատկապես արգասաբեր է եղել նրա քնարը Հյուսիսային Կովկասի Արմավիր հայաշատ քաղաքում:

Նկատենք, որ Ջիվանին մշտապես եղել է ոստիկանության հսկողության ներքո, ենթարկվել է հետապնդումների, արգելվել են նրա ելույթները, բռնագրավել նվագարանը: Ուշագրավ է ոստիկանի մասին հետևյալ երգը.

---

[28] *Հ. Ս. Ն ա լ շ ա ջ յ ա ն. Հուշեր անցյալեն.– «Սեբաստիա» (Նյու Յորք), 1966, սեպտեմբեր, էջ 24:*
[29] *Ա շ ո ւ ղ Ջ ի վ ա ն ի. Անհայտ երգեր, էջ 596:*
[30] *Նույն տեղում, էջ 595–606:*

Ո՞ւր գնամ որ չտեսնեմ ես
Անգութ ոստիկանի երես,
Անխղճմտանք և պոտկերես,
Լկտի ոստիկանի երես:

Սաստիկ սիրտս զզվել է իմ,
Դիմանալու էլ ուժ չունիմ,
Բարվոք է իմ մահս տեսնիմ,
Քան մի ոստիկանի երես:

Ջիվանս ճիշտ տեղեկացա,
Բնավ օձի լավը չկա,
Մինչև հիմա ես չտեսա,
Բարի ոստիկանի երես[31]*:*

Ջիվանու խմբի մշտական անդամ, աշուղ Ջամալու որդին՝ ժողովրդական արտիստ Շարա Տալյանը, իր հուշերում գրում է. «Մեր թաղամասի ոստիկանապետ Գլեբովը մի հայատյաց մարդ էր... Այդ Գլեբովն էր, որ ամիսը մի երկու անգամ բռնագրավում էր Ջիվանու խմբի երաժշտական գործիքները և արգելում աշխատել, պատճառաբանելով, թե աշուղները երգում են ազգային ու հեղափոխական երգեր»[32]*: Այնուհետև շարունակում է. «Արհեստավորներն ու խանութպանները փող էին հավաքում, բանակցում Գլեբովի հետ, կաշառում: Ապա նորից երգում էր Ջիվանին»:*

Կյանքի վերջին տարիներին Թիֆլիսում Ջիվանին ելույթ էր ունենում վանեցի Պետրոս Ասլանյանի սրճարանում, որի ճակատին փակցված էր մի փոքր ցուցանակ. «Սրճարան՝ ուր երգե աշուղ Ջիվանին»[33]*: Ցուցանակի առկայության փաստը, նաև սրճարանի հաճախորդների կողմից դրամահավաք կազմակերպելը՝ ոստիկանապետին կաշառելու նպատակով, ցույց է տալիս, թե որքան սիրված է եղել աշուղը:*

Ժամանակ անց՝ Ջիվանին իր խմբով տեղափոխվում է ս.Գևորգ եկեղեցու դիմաց գտնվող Հաշտոնց Գասպարի սրճարանը: Սրճարանատիրոջը դժվարությամբ է հաջողվում Ջիվանուն Ասլանյանի «ձեռքից խլել»: «Գասպարի սրճարանը անհամեմատ ավելի ընդարձակ էր, տեղն էլ բանուկ, մարդաշատ: Սրճարանը ամեն օր լեփ-լեցուն էր բազմությամբ»[34]*: Գասպարի սրճարանի հաճախորդներից է եղել ժողովրդական հերոս Անդրանիկը*[35]*:*

Ինչպես ասվեց, 1871 թ. սկսած Ջիվանին ունեցել է սեփական խումբ, հիմնականում բաղկացած երեք հոգուց: Հայտնի է, որ նրա խմբի հիմնական անդամներից էր աշուղ Ջամալին՝ Ջիվանու կնոջ եղբայրը: Երրորդ անդամի մասին, մեր ձեռքի տակ եղած տվյալները վերաբերում են XX դ.

---

[31] *Ջիվանու քնարը, էջ 257:*
[32] *Շ. Տ ա լ յ ա ն. Դեպքեր, դեմքեր, մտքեր, Երևան, 1973, էջ 32:*
[33] *Նույն տեղում, էջ 12:*
[34] *Նույն տեղում, էջ 31:*
[35] *Նույն տեղում:*

սկզբին: Այդ մասին Ջիվանին գրում է.

Ընկերս մեկն էր, մի լավ վրացի,
Ազգը Ուսուբեկով, անունն Ալեքսի,
Սիրուն թառ նվագող, ծանոթ և երգի,
Գեղեցիկ ածող էր մեղեդի, կագավ[36]*:*

Կյանքի վերջին տարիներին Ջիվանու խումբը բաղկացած էր չորս հոգուց. ինքը նվագում էր ջութակ, Ջամալին՝ սանթուր, Ալեքսին՝ թառ, էրզրումցի Հարութիկը՝ կլառնետ[37]*:*

Ջիվանուն բանաստեղծություններ են նվիրել ոչ միայն իր իսկ ներկայությամբ, այլև՝ հեռակա կարգով: Հատկանշական է բանաստեղծ Հ. Հովհաննիսյանի ձոնը՝ գրված 1904 թ. փետրվարի 5-ին Վարդանանց տոնի առթիվ կազմակերպած ընկերական հավաքույթի ժամանակ.

Ես խեղճ ու կրակ աշուղ Հովհաննես,
Քեզ ի՞նչ արժանի մի բան ունեմ ես,
Ի՜նչ էլ որ լինեմ, անփորձ մանկան պես
Քո աշակերտն եմ, ո՞ւր ես, Ջիվանի[38]*:*

Անվանի բանաստեղծը գրում է. «Ես պարծանք եմ համարում ինձ, որ Ջիվանուն հայր ասելու պատիվ ունիմ... Ես փոքր ժամանակիցս կարդացել եմ Ջիվանին, սիրել, ոգևորվել և փաստ է, որ Ջիվանու շնորհիվ ես բանաստեղծ եմ. Ջիվանուն եմ առաջին անգամ նմանվել. Ջիվանին է տվել ինձ առաջին բանաստեղծական զարկը...»[39]*:*

Ջիվանու խմբի ելույթները, մասնավորապես նրա երգն ունկնդրողը հիացմունք ու անմոռաց պահեր է ապրել: «Երգած պահուն առաջվան մարդը չէր ինքզինքեն դուրս կելներ, կվերանար, հոգեկան բան մը կրդառնար, առանց արվեստի, առանց ճիգի կսահեին երգերը իր շրթունքներեն, ձայնը ու նվագարանը քիչ կուգային կարծես՝ իրեն սրտին բոլոր խանդը, հոգվույն բոլոր իղձը արտահայտելու... արվեստականութուն բնավ չկար իր քով: Երգերը երգերուն կհաջորդեին անընդհատ առանց հոգնածություն պատճառելու, ընդհակառակը՝ հաճույք ալ ազդելով իրեն իսկ»[40]*,– գրում է Տ. Արփիարյանը:*

Ուշագրավ է Արաբկիրի աշուղական երգարվեստին քաջատեղյակ Ա. Փոլատյանի կարծիքը Ջիվանու մասին. «Աննման ծընունդ ես, ազնիվ, գեղեցիկ... «որդեգրված» արաբկիրցիներու կողմե, հարսանիքներու և խրախճանքներու ընթացքին կերգեին ու կը պարեին մեծ եռանդով»[41]*:*

---

[36] *Աշուղ Ջիվանի. Անհայտ երգեր, էջ 595:*
[37] *Շ. Տալյան. նշվ. աշխ., էջ 32:*
[38] *Գ. Լևոնյան. Հուշեր, Երևան, 1959, էջ 51:*
[39] *Ա. Սահակյան. նշվ. աշխ., էջ 52:*
[40] *Գ. Լևոնյան. Երկեր, էջ 429:*
[41] *Պատմություն Հայոց Արաբկիրի, կազմեց և երկասիրեց Անդրանիկ Փոլատյան, Նյու Յորք, 1969, էջ 206:*

Բնորոշ է մեծ աշուղի վերաբերմունքն իր դերի և իր երգի հանդեպ ընդհանրապես: Բերենք մի խոսուն օրինակ. Իզմիրլյան կաթողիկոսի ընտրությանը[42] մասնակից արևմտահայ պատգամավորները (Մ. Չերազ, Ա. Չոպանյան, Վ. Թեքեյան, Չիֆթե Սարաֆ) գտնվելով Թիֆլիսում, իրենց պատվին կազմակերպած ընդունելության ժամանակ, ցանկություն են հայտնում լսելու Ջիվանու երգը: Վերջինս արդեն ծանր, անկողնային հիվանդ, չնայած բժշկի խստիվ արգելքին, գնում է, երգում, վերադառնում և այլևս անկողնուց վեր չի կենում: Դեպքը տեղի է ունեցել 1908 թ. հոկտեմբերի 8-ին[43]: Ահա թե ինչ է գրում ականատեսն այդ երեկոյի մասին. «Այն մեծ հացկերույթին, զոր Թիֆլիսի հայությունը տվավ ի պատիվ թրքահայ քառասուն պատգամավորներուն, բաղդն ունեցանք լսել ծերունի Ջիվանին, մեծ ժողովրդական բանաստեղծը, որ իր հոգնած խռպոտ ձայնով ու իր ավանդական սազով իր գեղեցիկ տաղերեն մեկ քանիսը երգելով մեր սրտերը թուդ հանեց, իսկ Կոմիտասը զմայելցուց ամենքը իր բազմաթիվ, բազմազան հրաշալի երգերով»[44]:

Ջիվանին վախճանվել է 1909 թ. փետրվարի 24-ին: Անվանի աշուղի հուղարկավորությանը մասնակցել են տարբեր ազգերի մեծ թվով ներկայացուցիչներ: Հատկանշական է, որ այդ օրերին «Դաշնակցության» գործով Մետեխի բանտում գտնվող Հովհ. Թումանյանն ու Ավ. Իսահակյանը, երբ հուղարկավորության թափորն անցնում էր բանտի մոտով, վանդակապատ պատուհանից վերջին հրաժեշտն են տվել մեծ աշուղին՝ թաշկինակները թափահարելով[45]:

Ստորև ներկայացնում ենք Ջիվանու հիշատակին նվիրված արևմտահայ բանաստեղծ Արամ Չարրգի «Հիշեցեք նորան» վերնագրով բանաստեղծությունից երկու քառյակ.

Նա վաղ ծերացավ, ըզգայուն սըրտին շուտ տիրեց ձըմեռ,
Հետը բերելով հավիտենական անայգ գիշերներ.
Նորա կըրծքի տակ հանգավ ծով հըրդեհն ուխտին սըրբազան,
Դատարկ կըրծքի տակ լոկ մի բուռ մոխիր թողնելով միայն:

Եվ նա այդ ըզգաց, մահվան բոպեին էլ վերջին անգամ,
Սերն ուզեց երգել սըրտի խորերից, սերն եղբայրական,
Եվ այդ երգի հետ լըռեց ամեն բան և՛ սիրտ, և՛ քընար,
Արձագանգին պես, որ լըսվելուն հետ իսկ կ՚անհայտանար[46]:

---

[42] *Նորընտիր կաթողիկոսին նվիրված երգը՝ «Նորընտիր հայրապետի մասին». տե՛ս Աշուղ Ջիվանի. Անհայտ երգեր, էջ 540:*

[43] *Ջիվանու Արաքս դստեր հիշողություններից.– «Ասպնջակ» (Երևան), 3. VII. 1996:*

[44] *Ա. Չոպանյան. Կոմիտասը և հայ երաժշտությունը.– «Անահիտ» (Փարիզ), Գ տարի, թիվ 1–2, մայիս-օգոստոս, 1931, էջ 119:*

[45] *Գ. Լևոնյան. Հուշեր, էջ 72:*

[46] *«Գեղարվեստ» (Թիֆլիս), 1913, - 5, էջ 100:*

ДЖИВАНИ
(Биографический очерк)

ТОВМАС ПОГОСЯН

Р е з ю м е

Выдающийся представитель армянской национальной ашугской школы ашуг Дживани [Серовбе Степани Бенкоян (Левонян)] родился в 1846 г. в деревне Карцах (Джавахк, современная Грузия) в крестьянской семье. Грамоте научился у сельского учителя. Интерес и любовь к народному ашугскому песнопению у него проявились рано. В течение 5 лет он обучался ашугскому песенному творчеству у деревенского ашуга Сиаи.

В 1864 г. Дживани по семейным обстоятельствам посещает Тифлис и Александрополь, которые производят на него неизгладимые впечатления. Особенно привлекательным был Александрополь – центр знаменитых ашугов, где ему удается послушать их в одном из кафе города. Вернувшись в родную деревню, он окончательно принимает решение стать ашугом. Вскоре он знакомится с посетившим Карцах ашугом Сазаи, с которым он начинает свою деятельность в Тифлисе. В 1868 г. братья Талояны приглашают его в Александрополь в свое кафе. Александрополь способствует развитию и становлению творческих возможностей Дживани, осуществлению его замыслов, связанных с ашугским песнопением. В кругу армянской патриотически настроенной передовой интеллигенции Дживани становится одним из образованных людей своего времени, благодаря трудолюбию, тяге к национальной истории, литературе и фольклору, а также интересу к древним народам, познанию их культуры и истории. В Александрополе он создает школу, в которой обучает ашугскому сочинительству на армянском языке, армянскому стихосложению, закладывает основы национального ашугского песнопения. Последователями его школы становятся известные впоследствии ашуги Шерам, Магуби Геворг, Ашот, Шаген и др. В Александрополе Дживани пользуется огромным авторитетом среди ашугов, неоднократно избирается главой ашугского братства.

В целях улучшения материального положения семьи в 1895 г. Дживани переезжает в Тифлис, однако ему не удается заметно изменить свое положение. А здоровье ухудшается, зрение слабеет. Поездка в Европу (Болгария, Вена) излечения не приносит, но он продолжает творить. Его группа в Тифлисе состоит из четырех музыкантов: он, брат его жены Джамали – сантур, грузин Усубеков – тар и Арутик – кларнет. За его деятельностью постоянно устанавливается слежка, часто отбираются инструменты и в Тифлисе каждый раз приходится откупаться взяткой в полиции.

Песни Дживани исполнялись везде, где жили армяне, он со своей группой выступает в Тифлисе, Баку, Батуме, Карсе, Эрзруме, Шуши, Гандзаке, Ереване и т. д. Этому способствовал язык песен, которые сочинялись на восточно-армянском литературном языке, в отличие от традиционных тюрко-персидских.

Отличались они и многотематичностью. В 1900 г. он с группой совершает поездку по Черноморскому побережью, Северному Кавказу, Ростову-на-Дону, Харькову и др.

Первый сборник песен Дживани вышел в Александрополе в 1882 г., второй и третий – в 1882 и 1893 гг. соответственно. Затем его стихи печатались в разных сборниках, песенниках, журналах. Его песни переводились на русский, французский и другие языки.

Умер Дживани 24 февраля 1909 г. в Тифлисе.

JIVANI
(Biographical sketch)

TOVMAS POGHOSSYAN

S u m m a r y

Jivani (Serovbe Stepan Benkoyan (Levonyan)) – a prominent representative of Armenian national Ashough school, was born in the village of Kartsakh (Javakhk, currently the territory of Georgia), in 1846, to a rural family. Village teacher taught him reading and writing. Since his early childhood he had been fascinated by national ashough songs. He learned ashough song art by the support of the village ashough Siayi.

In 1864 Jivani visited Tiflis and Alexandropol for domestic reasons, and these visits made indelible impression on him. Alexandropol was more attractive, it was a centre of famous ashoughs of the time. Returning to his native village he made his final decision to become an ashough. Soon he met ashough Sazai in Kartsakh, and together they started their activities in Tiflis. In 1868 Taloyan brothers invited him to their cafe in Alexandropol. Alexandropol promoted the development of Jivani's creative potential, fulfilling his desires connected with ashough singing. Within the frame of patriotic leading intelligentsia, Jivani became one of the most educated persons of the time due to his diligence, love for national history, literature and folklore, as well as his interest towards ancient peoples, their culture and history. In Alexandropol he headed ashough school where he taught art of ashough writing in Armenian, Armenian prosody and created fundamentals of national ashough singing. The followers of his school were Sheram, Magubi Gevorg, Ashot, Shahen and many others. In Alexandropol he was awarded by the honorary title of leading master of Ashoughs.

In order to improve the welfare standards of his family Jivani moved to Tiflis in 1895, but unfortunately he was unable to improve the condition completely. His health became worse, and eyesight weaker. He travelled to Europe (Bulgaria, Vienna), but it didn't help, and he continued to create. In Tiflis his band consisted of four musicians – his wife's brother Jamali (santur), Georgian musician Usubekov (tar), Harutik (clarinet) and he. His activities had been shadowed, and he constantly had difficulties with authorities.

Jivani's songs were performed wherever Armenians lived. He had concerts in Tiflis, Baku, Batumi, Kars, Erzurum, Shushi, Gandzak, Yerevan and so on. This kind of popularity was partly due to the language of his songs, which were composed in the Eastern-Armenian literary language unlike traditional Turkish and Persian. Varieties of his songs themes was another reason of their popularity.

In 1900 with his band he had concerts along the Black Sea coast, in the North Caucasus, Rostov-on-Don, Kharkov and other places.

The first compilation of Jivani's songs was published in Alexandropol in 1882, the second and the third ones in 1882 and 1893, respectively. His poems were published in different collections, songbooks, journals. His songs were translated into Russian, French and many other languages.

Jivani died on February 24, 1909, in Tiflis.